ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՀԱՅԱԼԵԶՈՒ ՀԵՌՈՒՍՏԱՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ

Աննա Ժամակոչյան[*]

> ...Այն, ինչ նորություն է մեկի համար, կարող է լինել ժամանց, ներշնչանք, քարոզչություն կամ էլ շեղող գործոն մեկ ուրիշի համար:
>
> *Ուիլյամ Հայթեն*[1]

Ներածական. մեթոդ և մեթոդաբանություն

Ադրբեջանական քարոզչության գործիչները 2009թ. հոկտեմբերից գործարկեցին նոր մեխանիզմ՝ բացելով քառալեզու (ռուսերեն, հայերեն, պարսկերեն և անգլերեն) լրատվություն տրամադրող *ATV International*[2] (կրճատ՝ *ATV-Int*) արբանյակային հեռուստաալիքը: Թեև այն նախատեսված է և՛ հակահայկական, և՛ հակաիրանական տեղեկատվական գործողությունների համար, հիմնական բովանդակությունը ծառայեցվում է հենց առաջին նպատակով, ինչի ուսումնասիրությունն էլ ՀՀ և ԼՂՀ տեղեկատվական անվտանգության տեսանկյունից առաջնահերթ նշանակություն ունի:

Նշված նկատառումներից ելնելով՝ հոդվածում կվերլուծենք *ATV-Int* հայալեզու լրատվականի մոնիթորինգի տվյալները: Որպես մոնիթորինգի օբյեկտ հանդես է եկել ամենօրյա *«ATV News International»* լրատվականի հայալեզու թողարկումը:

Վերլուծության նպատակն է *ATV-Int* ինֆոքաղաքականության որակական և քանակական բնութագրիչների նկարագրումը՝ ՀՀ ու ԼՂՀ հասարակու-

---

[*] «Նորավանք» ԳԿՀ ավագ փորձագետ:

[1] *Hachten, W.A.,* "The troubles of journalism: A critical look at what's right and wrong with the press ", NJ: Erlbaum; 2001.

[2] *ATV international* արբանյակային ալիքը ձևավորվել է մասնավոր *Azadazerbaijan TV* հեռուստաալիքի հիմքի վրա: Այն նախատեսված էր 6 լեզուներով (ադրբեջաներեն, անգլերեն, ռուսերեն, պարսկերեն, թուրքերեն և հայերեն) լրատվությամբ Ադրբեջանի քարոզչության նպատակներին ծառայեցնելու համար (http://news.day.az/hitech/149378.html), սակայն առայժմ լրատվական լեզուները 4-ն են:

թյունների տեղեկատվական անվտանգության տեսանկյունից: Մոնիթորինգն իրականացվել է քանակական մեթոդով[1]՝ որպես լրացուցիչ մեթոդ կիրառելով որակական[2] դիտարկումը:

Մոնիթորինգի շրջանն ընդգրկում է Ադրբեջանում Խոջալուի ողբերգության հիշատակի օրը՝ փետրվարի 26-ը և դրան նախորդող 3 օրերը՝ նպատակ ունենալով դիտարկել ադրբեջանական քարոզչության բնույթն ու եղանակները Խոջալուի շուրջ ստեղծված ինֆոլոգեմի[3]՝ որպես առավել տիպական դեպքի, համատեքստում: Այդպիսով, մոնիթորինգն իրականացվել է տիպային դեպքի ուսումնասիրության (*case study*)[4] մեթոդաբանությամբ, մասնավորապես՝ Ադրբեջանում Խոջալուի հիշատակին առնչվող օրերի եթերի մոնիթորինգի եղանակով: Հետևաբար, ստորև ներկայացված քանակական տվյալները չեն կարող տարածվել *ATV-Int* այլ թողարկումների վրա, դրանք ներկայացուցչական են միայն տվյալ դեպքի՝ *ATV-Int* 2010.02.23-2010.02.26 (տե՛ս *Աղյուսակ 1*) ժամանակահատվածի հայալեզու լրատվական թողարկումների համար, սակայն այդ քանակական տվյալներից բխող որակական դիտարկումները բնութագրում են *ATV-Int* ընդհանուր տեղեկատվական քաղաքականությունը:

Աղյուսակ 1

Ուսումնասիրված նորությունների ծավալը՝ ըստ օրերի

Ամսաթիվ	նորությունների քանակը	%	ընդհ. տևողությունը րոպեներով	տևող. %-ը ամբողջի մեջ
2010.02.23	10	25,0%	11,9 ր	23,8%
2010.02.24	11	27,5%	12,3 ր	24,4%
2010.02.25	7	17,5%	10 ր	19,9%
2010.02.26	12	30,0%	16 ր	31,9%
Ընդամենը	40	100,0%	50,2 ր	100,0%

Մոնիթորինգի վերլուծության միավորն է հանդիսացել մեկ առանձին նորությունը կամ լրատվական ռեպորտաժը: Ընդհանուր առմամբ քանակական

[1] Մոնիթորինգն իրականացրել է «Նորավանք» ԳԿՀ Տեղեկատվական հետազոտությունների կենտրոնի փորձագետ Դիանա Գալստյանը, ինչի համար հեղինակը հայտնում է իր շնորհակալությունը:

[2] Որակական դիտարկման է ենթարկվել 2009-2010թթ. եթերը, հետևաբար որոշ հարցերի շուրջ որակական դիտարկումների օրինակները ներկայացված են ոչ միայն 2010.02.23-2010.02.26, այլև մյուս օրերի թողարկումներից:

[3] Ինֆոլոգեմը ինֆորմացիոն միֆոլոգեմի համադրությունն արտահայտող հասկացություն է և նշանակում է իրական փաստերն արտամղող կեղծ տեղեկատվություն (մանրամասն տե՛ս «Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը», «Նորավանք», 2009, էջ 39):

[4] Դեպքի ուսումնասիրությունը հետազոտական ռազմավարություն է, որն ուղղված է սոցիալական երևույթի խորքային, ամբողջական և համակողմանի վերլուծությանն առանձին էմպիրիկ օբյեկտի (դեպքի) օրինակով, http://socioline.ru/pages/irina-kozina-case-study-nekotorye-metodicheskie-problemy:

մոնիթորինգի է ենթարկվել 40 լուր՝ 50,2 րոպե ընդհանուր տևողությամբ (տե՛ս *Աղյուսակ 1*)։

Մոնիթորինգի գործիքի մշակման համար հիմք է ծառայել Կիրառական մեդիա հետազոտությունների ինստիտուտի (Կիրառական գիտությունների Ցյուրիխի համալսարան) աշխատակիցներ Քրիստոֆ Շփարքի (*Christoph Spurk*) և Գիդո Քիլի (*Guido Keel*) հեղինակությամբ մշակված մեթոդաբանական մոտեցումը՝ ԶԼՄ որակի մոնիթորինգի առնչությամբ[1]։

Այսպիսով, սույն հետազոտության գործիքը բաղկացած է՝ 1. լրատվության տեխնիկական և 2. բովանդակային կողմերը բացահայտող հիմնական տիպի փոփոխականներից։

Առաջին տիպի փոփոխականների միջոցով հնարավոր է դառնում իմանալ *լրատվության ամսաթվի, տևողության, վերնագրի, ծանուցման առկայության, այլ մեդիայի լոգոյի պատկերման* մասին։ Բովանդակային կողմերը բացահայտող փոփոխականներն օգնում են տեղեկատվություն ձեռք բերել ժամանակային տիրույթի, լրատվության թեմայի, թեմատիկ համատեքստի, լրատվության համար առիթ հանդես եկած իրադարձության, պատկերաշարի թեմայի, բռնության տեսարանների առկայության, բոլոր, այդ թվում՝ հայ սուբյեկտների տիպերի և քանակի, տեսանկյունների քանակի, աղբյուրների տիպերի և քանակի, սուբյեկտների՝ իբրև աղբյուր հանդես գալու համամասնության և սուբյեկտներին վերագրվող բնորոշումների մասին։

Վերլուծության արդյունքները

1. Լրատվության ժամանակային տիրույթ

ATV-Int լրատվության մեջ ժամանակային տիրույթն ունի Աղյուսակ 2-ում ներկայացված պատկերը։ Չհաշված օպերատիվ լրատվության շրջանը (թողարկման օրվանից մինչև մեկ շաբաթ առաջ)՝ ամենահաճախ հիշատակված ժամանակահատվածը 47,5%-ով կազմում են «1988-ից 1994 թվականները»՝ Ղարաբաղյան հարցի բարձրացման և Ադրբեջան-ԼՂՀ պատերազմի տարիները։ Այս տվյալն արդեն իսկ նախանշում է, որ հեռուստաալիքի տեղեկատվական բովանդակությունում մեծ նշանակություն է տրվել նշված շրջանի իրադարձություններին։

[1] ԶԼՄ որակի գնահատման մոնիթորինգային գործիքի փորձարկմանը և հետագա լրամշակմանը մասնակցել են տարբեր երկրների, ինչպես նաև Հայաստանի փորձագետներ (այդ թվում հոդվածի հեղինակը)՝ Կովկասյան լրատվամիջոցների ինստիտուտի կողմից իրականացված ծրագրի շրջանակներում։

Աղյուսակ 2

Ինչ ժամանակային տիրույթի են վերաբերում լուրերը

Ժամանակային տիրույթ	Այո	Ոչ
1. ներառյալ անցած շաբաթվանից մինչև այսօր ներառյալ	80,0%	20,0%
2. ներառյալ անցած ամսից մինչև անցած շաբաթ	5,0%	95,0%
3. ներառյալ անցած տարվանից մինչև անցած ամիս	10,0%	90,0%
4. 1995-ից մինչև անցած տարի	20,0%	80,0%
5. ներառյալ 1988-ից մինչև 1994թ. ներառյալ	47,5%	52,5%
6. ներառյալ 1918-ից մինչև 1987թ.	0,0%	100,0%
7. ներառյալ 1915-ից մինչև 1917թ.	5,0%	95,0%
8. 1915-ից առաջ	5,0%	95,0%
9. ապագա (նշվել են կոնկրետ ժամկետներ կամ, օրինակ՝ մյուս շաբաթ, մյուս ամիս և այլն)	57,5%	42,5%

2. Լրատվության թեմա, հիմնական ուղերձ

Թեմաների առանձնացումն իրականացվել է յուրաքանչյուր նորությունում առկա հիմնական ասելիքի՝ ուղերձի ձևակերպման և խմբավորման միջոցով: Կազմված 10 հիմնական թեմաները ներկայացված են *Աղյուսակ 3-ում*: Դրանք մեծ մասամբ փոխառնչվում են, և հնարավոր է, որ 1 թեմայի շրջանակներում հնչած լինեն այլ թեմատիկ դիրքորոշումներ ևս, սակայն մոնիթորինգում կիրառված սկզբունքն է եղել հիմնական շեշտադրվող 1 թեմայի առանձնացումը յուրաքանչյուր 1 նորության մեջ:

Նկատելի է, որ հիմնական թեմաներից 8-ը անմիջականորեն առնչվում են ՀՀ-ին, ԼՂՀ-ին և ողջ Հայությանը, ինչպես նաև պարունակում են հակահայկական բովանդակություն:

Թեմայի հաճախությունը, դրա ծանուցման (անոնսի) համամասնությունը, ինչպես նաև տևողությունը ցույց են տալիս տվյալ թեմային հեռուստաալիքի կողմից տրվող կարևորությունը: Ուսումնասիրված օրերին, ինչպես և ակնկալվում էր, միանշանակ կարևորվող թեման հանդիսացել է *«Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքի»* ներկայացումը: Այս թեման կազմել է բոլոր լուրերի 35,0%-ը, 1,5 րոպեից ավելի տևողությամբ լուրերի 50,0%-ը, և քառօրյա լրատվության ողջ տևողության 41,1%-ը (միջինը ամեն 5 րոպեից ավելի քան 2 րոպեն վերաբերել է նշված թեմային): Թեման 50,0% դեպքերում ներկայացվել է նաև ծանուցման մեջ: Այն ադրբեջանական հակահայ քարոզչության գլխավոր և ամենատարածվող թեմաներից է ոչ միայն դիտարկված օրերի, այլև առհասարակ հակահայկական քարոզչական քաղաքականության մեջ:

Ստորև բերված ցանկում ներկայացված մյուս թեմաները ևս, չնայած իրենց համամասնության համեստ ցուցանիշներին, արտացոլում են ոչ միայն *ATV-Int,* այլև Ադրբեջանի իշխանության կողմից վարվող ընդհանուր քարոզչության թեմաների ներկապնակը:

Աղյուսակ 3

Ինչ հիմնական մեկ թեմայի շուրջ է նորությունը և ինչպես է այն հանդես գալիս

Թեմաներ	քանակ	%	ծանուց-ման %	մինչև 1 բոպե տևողութ.	1-1,5 բոպե տևողութ.	1,5 բոպեից ավելի տևող.	թեմայի ընդհ. տևող. բոպեներով	թեմայի տևող. %-ը ամբողջի մեջ
1. Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը	14	35,0%	50,0%	31,3%	25,0%	50,0%	20,6	41,1%
2. Ադրբեջանամետ տեղեկատվական-քաղաքական ակցիաներ, Հայաստանի վրա ճնշում գործադրելու կոչեր	5	12,5%	25,0%	18,8%	16,6%	,0%	4,7	9,3%
3. ԼՂ հակամարտություն և կարգավորում	4	10,0%	50,0%	12,5%	16,7%	,0%	3,8	7,6%
4. ԼՂ-ն Ադր. մասն է կամ աջակցություն Ադր. տարածքային ամբողջականությանը	4	10,0%	50,0%	6,3%	8,3%	16,7%	5,2	10,3%
5. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում և Ադրբեջան	3	7,5%	66,7%	6,3%	8,3%	8,3%	4,1	8,2%
6. Հայաստանյան սոցիալ-տնտեսական խնդիրներ, ընդդիմության կողմից իշխանության քննադատությունը	3	7,5%	66,7%	6,3%	8,3%	8,3%	3,5	7,0%
7. Ադրբեջանական մշակույթի հայկական բանագողություն և յուրացում	2	5,0%	50,0%	,0%	,0%	16,7%	4,6	9,1%
8. Հայոց ցեղասպանության մերժում կամ ճանաչման խոչընդոտում	2	5,0%	50,0%	12,5%	,0%	,0%	1,1	2,2%
9. Ադրբեջան-ԵՄ հարաբերություններ	2	5,0%	100,0%	6,3%	8,3%	,0%	1,6	3,2%
10. Ադրբեջանական և/կամ իսլամական մշակույթի ճանաչման շուրջ իրադարձություններ, միջոցառումներ	1	2,5%	100,0%	,0%	8,3%	,0%	1,0	2,0%
Ընդամենը	40	100,0%		100,0%	100,0%	100,0%	50,2	100,0%

Դիտարկելով թեմաների որակական կողմերը՝ նկատում ենք, որ *«Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը»* ներկայացնող թեման առանձնանում է *«կանխահաստատող»* դիսկուրսով, այսինքն՝ ներկայացվում է իբրև հայտնի փաստ: Այսպես, օրինակ. «*Այդ արյունալի դեպքերի ընթացքում, որը հայտնի է որպես «Խոջալուի ցեղասպանություն», ոչնչացվել կամ գերի են վերցվել հազարավոր ադրբեջանցիներ, Խոջալու քաղաքն էլ ջնջվել է երկրի երեսից...*», կամ. «*Բաքվում կայացել է ամերիկացի ռեպ կատարող Թոնի Բլեքմանի և ադրբեջանական «Դայրման» խմբի համատեղ «Արդարություն Խոջալուին» տեսահոլովակի շնորհանդեսը, որը նվիրված է հայերի կողմից Խոջալուում իրականացված ցեղասպանությանը...*»: Հաճախակի կիրառվում է կորուստների մանրամասն թվարկումը, որը դրանց ուռճացման հստակ միտում ունի, ինչը նույնիսկ բացահայտ նշվում է: Օրինակ. «*Այդ ցեղասպանության արդյունքում սպանվեց 613 մարդ, այդ թվում՝ 63 երեխա, 106 կին և 70 ծերունի, ամբողջությամբ ոչնչացվեց 8 ընտանիք, 25 երեխա կորցրեց ծնողներից 2-ին էլ, իսկ 130-ը՝ ծնողներից 1-ին, վիրավորվեց 487 մարդ, որոնցից 76-ը երեխաներ էին, անհայտ կորավ 150 մարդ: Նույնիսկ այն, որ այս ցուցակում հրազենից սպանվածներից բացի ընդգրկվել են նաև ցրտի հետևանքով զոհվածները, սա մեծ թիվ է...*»: Ուռճացման և չափազանցման, ինչպես նաև կեղծիքների տարածման միջոցով քարոզչական թեզի հիմնավորման ձգտումն արտացոլում է խնդրում Ադրբեջանի պաշտոնական քաղաքականությունը, քանի որ հայ ուսումնասիրողների կողմից հայտնաբերվել են նման բազմաթիվ այլ փաստեր ևս[1]: Կարևոր է նաև այն, որ «Խոջալուի» թեման դիսկրետ չի ներկայացվում, գրեթե միշտ առկա է նաև «հայկական ագրեսիայի» համատեքստը, որի արդյունքում Ադրբեջանի կորուստների շարքում տեղ է գտել Խոջալուի ողբերգությունը: Այն ըստ էության ծառայում է ԼՂՀ խնդրում Հայաստանին իբրև *ագրեսոր* և *զավթիչ* ներկայացնելու գործոն և ադրբեջանական շահերի պաշտպանության փաստարկ: Այս դրույթը հիմնավորվում է նաև Ադրբեջանում Խոջալուի հիշատակի օրվա՝ փետրվարի 26-ի լրատվական թողարկումով, որը վերջանում է քնարական ռեպորտաժով: Դրանում ԼՂՀ Բերձոր ու Շուշի քաղաքները խորհրդային և պատերազմական ժամանակներում պատկերող տեսաշարի ֆոնին մանկական ձայնով հնչում է հայրենասիրական երգ, որն ավարտվում է *«We'll be back!»* խոստում-սպառնալիք արտահայտող տեքստով:

Հատկանշական է, որ *«ԼՂ-ն Ադրբեջանի մասն է կամ աջակցություն Ադրբեջանի տարածքային ամբողջականությանը»* թեմայի շրջանակում ևս դիսկուրսն ընթանում է հաստատական և անքննելի դիրքերից, այսինքն՝ չի վիճարկվում «ԼՂ պատկանելությունը Ադրբեջանին» և բանակցություններում աշխարհի միանշանակ աջակցությունն «Ադրբեջանի տարածքային ամբողջա-

[1] Խոջալուի բնակիչների շրջանում զոհերի ցուցակների հայաստանյան ուսումնասիրողները նշում են, որ ադրբեջանական կողմի պաշտոնական և այլ ցուցակներում ներկայացված են տարբեր՝ 508, 530, 601 հոգու անձնանուններ, որոնք բազմաթիվ անճշտություններ ունեն (*http://xocali.net/RU/List/text.html*): Թեմայի շուրջ այլ փաստագրական կեղծիքների մասին կարելի է ծանոթանալ *xocali.net* կայքի մյուս էջերում:

կանությանը». *«Այսօր միջազգային հանրությունը, մասնավորապես՝ եռանախագահներն առաջարկում են խնդիրը լուծել տարածքային ամբողջականության սկզբունքի հիման վրա»*: Այդպիսով խնդիրը հանգեցվում է միայն մեկ հարցի՝ *«Հայաստանի կողմից իրականության ընկալմանը»*: *«ԼՂ-ն Ադրբեջանի մասը»* համարող պնդումներում աչքի է ընկնում *«Երբեք ադրբեջանական հողում չի ստեղծվի երկրորդ հայկական պետություն»* պաշտոնական թեզը, որը հագեցած քարոզչական իմաստ ունի ոչ միայն ԼՂՀ-ի վերաբերյալ Ադրբեջանի դիրքորոշման առումով: Այն նախևառաջ կանխահաստատում է *«ՀՀ–ն՝ որպես Ադրբեջանի տարածքում ստեղծված պետություն»*, ինչով էլ հիմնավորում է *«այդ տարածքում երկրորդ հայկական պետությունը թույլ չտալու»* անզիջում կեցվածքը: ՀՀ ուղղությամբ այսպիսի էքսպլիցիտ (նախահաստատ, անթաքույց) մեղադրականը նաև ՀՀ ներկայիս տարածքի նկատմամբ հավակնությունների հնարավորությունն է ցուցադրում:

3. Թեմատիկ տեսանկյուն

Ցանկացած թեմա կարելի է ներկայացնել տարբեր կողմերից: Հետևաբար, թեմատիկ տեսանկյուն կամ համատեքստ փոփոխականը ևս դիտարկվել է մոնիթորինգի ժամանակ:

Ընդհանուր առմամբ առանձնացվել են 11 թեմատիկ տեսանկյուններ, որոնք ներկայացված են *Աղյուսակ 4*-ում: Տվյալներից երևում է, որ 27,5% և 20%-ով գերակայում են *«Արտաքին քաղաքական և միջազգային հարաբերություններ»* և *«Լուսաբանում, տեղեկատվության տարածում»* տեսանկյունները, այսինքն՝ հաճախ այդպիսի համատեքստում են ներկայացվում թեմաները: *«Ցեղասպանության»* համատեքստում է ներկայացվում լուրերի 12,5%-ը:

Աղյուսակ 4

Ինչ տեսանկյունով է ներկայացվում հիմնական թեման

Թեմատիկ տեսանկյուն	քանակ	%
1. Արտաքին քաղաքական և միջազգային հարաբերություններ	11	27,5
2. Բանակցություններ	3	7,5
3. Ներքաղաքական հարցեր	1	2,5
4. Ցույցեր, նստացույցեր	1	2,5
5. Ռազմական, կոնֆլիկտ, պատերազմ	3	7,5
6. Տնտեսական (ֆինանսներ, արդյունաբերություն) և սոցիալական խնդիրներ	2	5,0
7. Հանրային կամ հիշատակի միջոցառումներ	3	7,5
8. Մշակույթ, սպորտ, տուրիզմ	1	2,5
9. Միջազգային հանցագործություններ (ահաբեկչություն, թրաֆիկինգ)	2	5,0
10. Ցեղասպանություն	5	12,5
11. Լուսաբանում, տեղեկատվության տարածում	8	20,0
Ընդամենը	40	100,0

Աղյուսակ 5

Թեմաներն ըստ հիմնական թեմատիկ տեսանկյունների բաշխվածության

Թեմաներ	1. Արտ. քաղաքական, միջազգ.	2. Բանակցություններ	3. Ներքաղաքական հարցեր	5. Ռազմական կոնֆլիկտ, պատերազմ	6. Տնտ. և սոցիալ. խնդիր.	7. Հանրային/ հիշատակի միջոցառում.	9. Միջազգ. հանցագործ.	10. Ցեղասպանություն	11. Լուսաբան., տեղեկ. տարածում	Այլ	Ընդամենը
1. Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը	7,1%	0%	0%	0%	0%	14,3%	14,3%	35,7 %	28,6%	0%	100,0%
2. Ադրբեջանաբնակ տեղեկատվական - քաղաքական ակցիաներ, Հայաստանի վրա ճնշում գործադրելու կոչեր	0%	0%	0%	40,0%	0%	0%	0%	0%	40,0%	20,0%	100,0%
3. ԼՂ հակամարտություն և կարգավորում	25,0%	25,0%	0%	25,0%	0%	0%	0%	0%	25,0%	0%	100,0%
4. ԼՂ-ն Ադր. մասն է կամ աջակցություն Ադր. տարածքային ամբողջականությանը	75,0%	,0%	0%	0%	0%	25,0%	0%	0%	0%	0%	100,0%
5. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում և Ադրբեջան	33,3%	66,7%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	100,0%
6. Հայաստանյան սոցիալ-տնտեսական խնդիրներ, ընդդիմության կողմից իշխանության քննադատություն	0%	0%	33,3%	0%	66,7%	0%	0%	0%	0%	0%	100,0%
7. Ադրբեջանական մշակույթի հայկական բանագրություն և ոչնչացում	50,0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	50,0%	100,0%
8. Հայոց ցեղասպանության մերժում կամ ճանաչման խոչընդոտում	100,0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	100,0%
9. Ադրբեջան-ԵՄ հարաբերություններ	100,0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	100,0%
10. Ադրբեջանական և/կամ իսլամական մշակույթի ճանաչման շուրջ իրադարձություններ, միջոցառումներ	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	100,0%	0%	100,0%

Աղյուսակ 6

Թեմատիկ տեսակետային յուրաքանչյուր դիտարկման վերաբերյալ կազմակերպված նյութեր

Թեմաներ	1. Ընտ. քաղաքակաղ, սիրաքաղ.	2. Բանակցություններ	3. Ներքաղաքակաղ խաղեր	4. Ցուցեր	5. Դաշտակաղ հնդկիկներ, կատերգաղ	6. Տեսլ. և սոցիալ. խնդիր.	7. Հանրային/ հիշողության ակցիաներ.	8. Ռշակույթ, սպորտ, տարբեր	9. Ռիշաղ. խնդ.	10. Ցեղասպանություն	11. Լուսաբերան, տեղեկ. ստաշնոր
1. Խոշոր դաշնակներ եւ ս վարողներ	9,1%	0%	0%	0%	0%	0%	66,7%	0%	100,0%	100,0%	50,0%
2. Ադրբեջանցու տեղեկատվական-քաղաքական սեղմերներ. Հանրաստանի վրա ճնշում գործադրելու կոչեր	0%	0%	0%	100,0%	66,7%	0%	0%	0%	0%	0%	25,0%
3. Լ.Ղ. հանանմարտություն և կարգավորում	9,1%	33,3%	0%	0%	33,3%	0%	0%	0%	0%	0%	12,5%
4. Լ.Ղ-ն Ադր. մասն է կամ աջակցություն Ադր. տարածքային ամբողջականության	27,3%	0%	0%	0%	0%	0%	33,3%	0%	0%	0%	0%
5. Հայ-թուրքական հարաբերություններ Ադրբեջան	9,1%	66,7%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
6. Հարաստանյան ազգաբնակչության խնդիրներ, ընդհանրապես գրվելիք նրանց հիշատակությունը	0%	0%	100,0%	0%	0%	100,0%	0%	0%	0%	0%	0%
7. Ադրբեջանական շահերի հարգանքը և ազգային ինքնությունը	9,1%	0%	0%	0%	0%	0%	0%	100,0%	0%	0%	0%
8. Հայոց ցեղասպանության վերաբերյալ կամ ճանաչման վերաբերյալ	18,2%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
9. Ադրբեջան-ՕՀ հարաբերություններ	18,2%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
10. Ադրբեջանական ս/կամ իսլամական շարժման հակադրվող ազգայնական, միջազգայնական	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%

Յուրաքանչյուր թեմայում թեմատիկ տեսանկյունների բաշխվածությունը դիտարկելով հնարավոր է համալրել քարոզչական թեզերի մասին պատկերացումները (տե՛ս *Աղյուսակ 5*)։

Հատկանշական է, որ *«Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը»* թեման ներկայացվել է առաջին հերթին *«ցեղասպանության»* համատեքստում՝ 35,7%-ով և *«լուսաբանման և տեղեկատվության տարածման»* համատեքստում՝ 28,6%-ով։ *«Միջազգային հանցագործության»* և *«հիշատակի միջոցառումների»* շրջանակներում է ներկայացվել 14,3%-ով, իսկ *«արտաքին քաղաքական և միջազգային հարաբերությունների»* համատեքստում՝ 7,1%-ով։

Իրենց հերթին թեմատիկ տեսանկյուններում առանձին թեմաների բաշխվածությունը ևս ինֆորմատիվ է (տե՛ս *Աղյուսակ 6*)։

«Ցեղասպանության» համատեքստում ներկայացված լուրերը 100%-ով առնչվել են *«Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը»* թեմային և բոլորովին չեն առնչվել Հայոց ցեղասպանությանը՝ թեև *ATV-Int-ը* այս հարցին ևս անդրադարձել է։ Վերջինս հանդես է եկել միայն *«արտաքին քաղաքական և միջազգային հարաբերությունների»* համատեքստերում, ավելի կոնկրետ՝ ԱՄՆ Կոնգրեսի կողմից առաջարկվող բանաձևի քննարկումների լույսի ներքո (տե՛ս *Աղյուսակ 5*, տող 8)։ Հայոց ցեղասպանության մասին հիշատակումները ներկայացվում են որպես *«անհիմն, շինծու, այսպես կոչված ցեղասպանություն»*։

Աղյուսակ 6-ում տեսնում ենք, որ *«բանակցությունների»* ոլորտն ավելի շատ առնչվել է *«Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը»*՝ 66,7%, քան *«ԼՂ հակամարտությանը»*՝ 33,3%։ Հետևաբար ուսումնասիրված ժամանակահատվածում Ադրբեջանի հետաքրքրությունների դաշտում հայ-թուրքական բանակցություններն ավելի մեծ տեղ են գրավել, քան ԼՂ բանակցությունները։

«Ներքաղաքական հարցերը», ինչպես նաև *«տնտեսական և սոցիալական խնդիրները»* 100,0%-ով առնչվել են Հայաստանին։ Ադրբեջանի ներքաղաքական և կուսակցական հարցերի լուսաբանում *ATV-Int-ի* հեռուստաթերում չի դիտարկվել մյուս օրերին ևս։ Ինչ վերաբերում է Ադրբեջանի տնտեսական հարցերի քննարկմանը, ապա չնայած դիտարկված շրջանում այն որպես առանձին թեմա հանդես չի եկել, այլ օրերին հաճախ են հանդիպում Ադրբեջանի աճող և հզորացող տնտեսության, նավթարդյունաբերության, զարգացող արտադրության մասին լուրերը, որոնց զուգահեռ շարունակվում են լուսաբանվել հայաստանյան տնտեսության չլուծված խնդիրները։ Ընդ որում՝ Հայաստանի խնդիրները սովորաբար ընդգծվում են Ադրբեջանի հաջողությունների մասին անմիջապես հաջորդող կամ նախորդող նորության համատեքստում, երբեմն էլ՝ նույն նորության շրջանակներում։ Այդպիսի *«կոնտրաստային ընդգծման»* տեխնիկան ամենատարածվածներից է քարոզչության

ոլորտում: Այսպես, օրինակ, 2009.10.26 օրվա լրատվականում Իրան-Հայաստան երկաթգծի կառուցման ֆինանսական ապահովման դժվարությունների մասին ռեպորտաժում նշվում է. «*Հիշեցնենք, որ մինչ Իրան-Հայաստան երկաթուղային նախագիծը խոսակցությունների մակարդակի վրա է, օրերս Իրանի, Ադրբեջանի ու Ռուսաստանի ներկայացուցիչները հերթական հանդիպումն են ունեցել Իրան-Ադրբեջան-Ռուսաստան երկաթուղային նախագիծը կյանքի կոչելու համար*»:

4. Լրատվական առիթ

Լրատվական առիթ փոփոխականի միջոցով պարզում ենք, թե ինչ արտաքին իրադարձություններ կամ ում նախաձեռնած միջոցառումներն են հիմք հանդիսացել յուրաքանչյուր նորության հեռարձակման համար, և թե ինչ դեպքերում է մեդիան ինքը հանդիսանում լրատվության ձևավորման նախաձեռնողը:

Աղյուսակ 7-ում երևում է, որ ուսումնասիրված հեռուստալուրերի 30%-ի հիմքում ընկած են *«Ադրբեջանի պաշտոնական մարմինների»* նախաձեռնած միջոցառումները կամ հայտարարությունները, 22,5%-ի հիմքում՝ *«Երրորդ երկրի գործիչների»*, 12,5% դեպքում՝ *«Միջազգային կառույցների»* և 7,5% դեպքում՝ *«Հայաստանի ընդդիմադիր գործիչների»:* 12,5% են կազմում *«ընդունված հիշատակի օրվան»* նվիրված լուրերը: *«Ոչ մի արտաքին իրադարձությունն»* այն դեպքն է, երբ որևէ իրադարձություն կամ արտաքին սուբյեկտների կողմից միջոցառում տեղի չի ունեցել, և *ATV-Int-ն* ինքն է նախաձեռնել տվյալ նորության ցուցադրումը: Այդպիսիք կազմել են 5%:

Աղյուսակ 7

Արդյոք նորության հիմքում ընկա՞ծ է որևէ իրադարձություն

Լրատվական իրադարձություն	քանակ	%
1. Ադրբեջանական պաշտոնական մարմինների նախաձեռնությամբ	12	30,0
2. Երրորդ երկրի գործիչների նախաձեռնությամբ	9	22,5
3. Միջազգային կառույցների, այդ թվում Մինսկի խմբի նախաձեռնությամբ	5	12,5
4. Ընդունված հիշատակի օր	5	12,5
5. Հայաստանի ընդդիմադիր գործիչների նախաձեռնությամբ	3	7,5
6. Ոչ մի արտաքին իրադարձություն	2	5,0
7. Այլ	4	10,0
Ընդամենը	40	100,0

Աղյուսակ 8

Հիմնական թեմաները լրատվական իրադարձությունների համատեքստում

Թեմաներ	1. Ադր. տարածք. ամբողջ. վերադարձ.	2. Երրորդ երկրի գործիչների դերակ.	3. Միջազգ. կառույց, Մինսկի խմբի դերակ.	4. Ընդունված հիշատակի օր	5. ՀՀ ընդդիմ. գործիչ, դերակ.	6. Ադ մի հասարակու-թյուն
1. Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը	58,3%	0%	0%	100,0%	0%	0%
2. Ադրբեջանամետ տեղեկատ-վական-քաղաքական ակցիա-ներ, Հայաստանի վրա ճնշում գործադրելու կոչեր	25,0%	0%	0%	0%	0%	0%
3. ԼՂ հակամարտություն և կարգավորում	0%	11,1%	60,0%	0%	0%	0%
4. ԼՂ-ն Ադրբեջանի մասն է, աջակցություն Ադր. տարածքային ամբողջականությանը	8,3%	33,3%	0%	0%	0%	0%
5. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորում և Ադրբեջան	0%	33,3%	0%	0%	0%	0%
6. Հայաստանյան սոցիալ-տնտեսական խնդիրներ, ընդդիմության կողմից իշխանության քննադատությունը	0%	0%	0%	0%	100,0%	0%
7 Ադրբեջանական մշակույթի հայկական բանագողություն և յուրացում	0%	0%	0%	0%	0%	100,0 %
8. Հայոց ցեղասպանության մերժում կամ ճանաչման խոչընդոտում	0%	22,2%	,0%	0%	0%	0%
9. Ադրբեջան-ԵՄ հարաբերություններ	0%	0%	40,0%	0%	0%	0%
10. Ադրբեջանական և/կամ իսլամական մշակույթի ճանաչման շուրջ իրադարձություններ	8,3%	0%	0%	0%	0%	0%
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0 %

Լրատվական իրադարձություններում թեմատիկ բաշխվածությունը դիտարկելիս (տե՛ս *Աղյուսակ 8*) նկատում ենք, որ «ադրբեջանական պաշտոնական մարմինների նախաձեռնությամբ» լրատվական իրադարձությունների 58,3%-ը վերաբերել է *«Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքի»* մասին լրատվությանը, 25%-ը՝ *«ադրբեջանամետ տեղեկատվական-քաղաքական ակցիաներին և Հայաստանի վրա ճնշում գործադրելու կոչերին»*: Այս տվյալները ցույց են տալիս, որ *ATV-Int* եթերի ուսումնասիրված ժամանակահատվածում ադրբեջանական պաշտոնական մարմինները լրատվական նախաձեռնություններով հանդես են եկել հիմնականում հակահայկական թեմաների շուրջ՝ 83,3%:

Հատկանշական է, որ *«ոչ մի արտաքին իրադարձությամբ»,* ասել է թե՝ *սեփական նախաձեռնությամբ* ներկայացված լուրերի (2 դեպք) թեման հանդիսացել է *«Ադրբեջանական մշակույթի հայկական բանագողություն և յուրացումը»*: Սա ևս քարոզչական տարածված դրույթ է և կրկին նպատակ ունի սպասարկել ԼՂՀ հարցի շրջանակներում Ադրբեջանի շահերի առաջմղմանը: Այսպես, օրինակ, «Սարի գյելին» երգի «ադրբեջանական ծագման», դրա շուրջ «Հայաստանի ու Ադրբեջանի մշակութային գործիչների բանավեճի» և «Արամ Խաչատրյանի կողմից Ուզեիր Հաջիբեկովի ստեղծագործությունների հիմնական թեմաների կրկնօրինակման մասին «բացահայտ խոստովանության» մասին ռեպորտաժի եզրակացությունը հետևյալն է. «*Հայաստանը ձգտում է յուրացնել ադրբեջանական պարերը, երգերը, օպերաները և նույնիսկ հողերը, որոնցով հպարտանում է Ադրբեջանի ամեն մի քաղաքացի*»:

5. Տեսաշարի թեմա

Տեսաշարի թեման ցույց է տալիս հեռուստալուրի ժամանակ ցուցադրվող պատկերների բնույթը:

Լուրերի ներկայացման 32.5% դեպքում (տե՛ս *Աղյուսակ 9*) օգտագործվել են դիակների կամ վիրավորների տեսարաններ, որոնք 12,5% դեպքերում հանդիսացել են տվյալ նորության գերակա (ամենաերկար) տեսաշարը (տե՛ս *Աղյուսակ 10*): Դրանք գրեթե ամբողջությամբ տեղ են գտել *«Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը»* ներկայացնող նորություններում և 1 դեպքում էլ՝ *«ԼՂ հակամարտություն և կարգավորում»* թեմայում:

Հատկանշական է, որ տեսաշարի ծավալային գերակայությունը չի ենթադրում դրա բազմազանություն, *ATV-Int-ը* չի խուսափել նույն տեսաշարի անընդհատ կրկնությունից նույնիսկ իրար հաջորդող նորություններում: Այսպես, օրինակ, խոշտանգված դիակների և վիրավորների միևնույն տեսաշարից 2010.02.26 լուրերում կրկնողաբար հատվածներ են ցուցադրվել 1-ին, 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ նորություններում: Այս տվյալները մատնանշում են *ATV-Int-ի* կողմից տվյալ թեմայի շրջանակներում լսարանի վրա հոգեբանական ազդեցության ձգտումները:

ATV-Int-ի կողմից տեսաշարի միջոցով ազդեցություն գործելու այլ փորձեր ևս դիտարկվել են: Ինչպես քանակական մոնիթորինգի ենթարկված, այնպես էլ հետագա օրերին հեռուստաթերթերում Հայաստանը պատկերվում է հիմնականում 7-10-ամյա վաղեմության տեսաշարերով, որտեղ ցուցադրվում են 2-րդ զումարման ԱԺ պատկերները, որտեղ խանութների ցուցանակները դեռևս խորհրդային ժամանակի ձևավորմամբ են, փողոցում երթևեկող մեքենաները և տրանսպորտը ևս խորհրդային ծագման են, քայլող մարդկանց հագուստն այսօրվա ընկալումներով ժամկետանց է: Սրանով ձևավորվում է անցյալում կանգ առած, զարգացման շանսեր չունեցող Հայաստանի պատկերը:

Այս առումով, սակայն, *ATV-Int-ը* միշտ չէ, որ հետևողական է, և քանի որ հաճախ օգտվում է Հ1-ից վերցված տեսաշարերից, կադրում ժամանակավրեպ տեսարաններին զուգահեռ երբեմն հայտնվում են ժամանակակից պատկերներ: Այդ կերպ որոշ օրերի լուրերում դիտարկվել են նաև ՀՀ-ն և ԼՂԻՄ-ը հարակից երկրներից առանձին ներկայացնող քարտեզի պատկերներ: Տեսաշարում Հ1-ի լոգոն հիմնականում քողարկվում է:

Բացի Հ1-ից, *ATV-Int-ի* եթերում, սկսած 2010.04.06-ից, կիրառվում են նաև «Ազատություն» ռադիոկայանի կայքում տեղադրված տեսաշարերը: *ATV-Int-ի* համար հաճախակի պրակտիկա է դարձել *«no comment»* խորագրով «Ազատություն» ռադիոկայանի կայքի տեսաշարի ներկայացումը, որտեղ լոգոն կրկին հիմնականում քողարկված է: Այս քայլը մեծապես հեշտացնում է *ATV-Int-ի* գործունեությունը՝ առանց մեկնաբանությունների հայաստանյան խնդիրները ներկայացնելիս: Քողարկված լոգոյով և առանց *ATV-Int-ի* մեկնաբանությունների ներկայացվող լուրն անփորձ հանդիսատեսի համար կարող է տպավորություն թողնել, թե ադրբեջանական կողմն ինքնուրույն է ձեռք բերել տվյալ ռեպորտաժը, սեփական հարցազրույցներն է անցկացրել ՀՀ-ում և ԼՂՀ-ում: Խիստ հազվադեպ է *ATV-Int-ը* տեղեկատվությունը տրամադրելիս հղում կատարում «Ազատություն» ռադիոկայանի հայկական ծառայությանը: Այս կապակցությամբ, կարծում ենք, որ *ATV-Int-ի* գործողությունները պետք է դիտարկվեն նաև իրավական տեսանկյունից և նրանց կողմից լոգոյի քողարկմամբ տեղեկատվության տրամադրումը պետք է իրավական գնահատականի արժանանա:

Անհրաժեշտության դեպքում *ATV-Int-ը* դիմում է նաև մեկնաբանման տարբերակին, որտեղ տեղեկատվության որոշ շեշտադրումներ փոփոխված են ներկայացվում: Օրինակ, «Ազատություն» ռ/կ. «Զանգելանը բնակեցվում է հայերով» ռեպորտաժի[1] տեսաշարը 2010.12.09-ին ցուցադրելով՝ ադրբեջանական *ATV-Int-ը* երևույթը ներկայացնում է պաշտոնական Ադրբեջանի մեկնաբանությամբ, որտեղ Ադրբեջանի արտգործնախարարության խոսնակը «հույս է հայտնում, որ ԵԱՀԿ գնահատման առաքելության ԼՂ հարակից տարածքների մասին հաշվետվության մեջ կներառվի հայերի բնակեցման փաստերի իրավիճակը» և ընդգծում. *«...Տվյալ տարածքների վերաբնակեցումն անօրինական է»*:

[1] http://www.azatutyun.am/video/2240192.html?isArticle=1

ATV-Int-ի կողմից տեսաշարային միջոցներով մանիպուլյացիայի մեկ այլ եղանակ դիտարկվել է ԵԱՀԿ 2010թ. գագաթաժողովի համատեքստում: Դեկտեմբերի 2-ի եթերում գագաթաժողովը պատկերող տեսաշարերում ցուցադրվեցին ՀՀ ԱԺ–ում 1999թ. հոկտեմբեր 27-ի ահաբեկչության պատկերները՝ դրանք զուգակցելով Հայաստանը որպես խաղաղ բանակցությունների շուրջ *«ապակառուցողական»* և *«օկուպանտ»* երկիր ներկայացնելու տեքստով. «*Ադրբեջանի նախագահը հայտարարել է, որ նա այլևս չի կարող հանդուրժել նման իրավիճակ, երբ ադրբեջանական տարածքները գտնվում են օկուպացման մեջ*»: Այս հնարքը կիրառողները դրանով ձգտում են Հայաստանին հանցագործ կերպար վերագրել: Հոկտեմբերի 27-ի տեսարանը կարող է հուզական իմաստով ազդեցիկ լինել հայաստանյան լսարանի համար, սակայն չի կարող ազդել հայկական ինքնընկալման՝ հանցագործների հետ Հայաստանի ու հայերի ինքնանույնականացման վրա, քանի որ Հայաստանում հանցագործների հերոսացում տեղի չի ունեցել, այլ ճիշտ հակառակը:

Աղյուսակ 9

Արդյոք լրատվության մեջ պատկերվո՞ւմ են բռնության տեսարաններ, դիակներ, վիրավորներ

Դիակներ, վիրավորներ տեսարաններում	քանակ	%
Այո	13	32.5
Ոչ	27	67.5
Ընդամենը	40	100,0

Աղյուսակ 10

Ո՞րն է լրատվությանն ուղեկցող պատկերների և կամ տեսաշարերի գերակա թեման

Տեսարանի թեման	քանակ	%
Գործնական հանդիպումներ, այցեր, հարցազրույցներ, նիստեր	18	45,0
Հանրային տոնախմբություններ, հիշատակի ծեսեր, համերգներ, կրոնական ծեսեր, մշակութային միջոցառումներ, սպորտ	8	20,0
Դիակներ, վիրավորներ	5	12,5
Քաղաքային տեսարաններ, բնապատկերներ	2	5,0
Պատերազմական տեսարաններ	2	5,0
Ցույցեր, խռովություններ, նստացույցեր	1	2,5
Բացման արարողություններ	1	2,5
Քարտեզներ	1	2,5
Այլ	2	5,0
Ընդամենը	40	100,0

6. Հերոսներ կամ սուբյեկտներ

Նորության հերոսները կամ սուբյեկտներն այն անձինք կամ կառույցներն են, որոնց գործողությունների և բնութագրի մասին հիշատակում է լուրը: Մոնիթորինգի ժամանակ առանձնացվել և հաշվարկվել են յուրաքանչյուր նորության 3 հիմնական սուբյեկտները:

Աղյուսակ 11-ում տեսնում ենք, որ դիտարկված նորություններն առնչվել են առնվազն «2 հերոսի», իսկ առավել հաճախ՝ 72,5% դեպքերում, նորությունը ներառել է «5 և ավելի հերսների» մասին տեղեկատվություն: Ընդ որում՝ 77,5 % դեպքերում հերոսների շարքում եղել են հայկական կողմի ներկայացուցիչներ, հայկական կողմին առհասարակ անդրադարձ չի կատարվել 22,5% դեպքերում, յուրաքանչյուր 2-րդ լուրում հիշատակվել է 1 հայկական հերոս:

Աղյուսակ 11

Քանի՞ հերոսի կամ սուբյեկտի (անձի, կառույցի) է անդրադառնում նորությունն ընդհանուր առմամբ, և քանի՞ հայկական հերոսի

Հերոսների քանակը	Ընդհանուր հերոսներ %	Հայկական հերոսներ %
ոչ մի հերոս	0	22,5
1 հերոս	0	50,0
2 հերոս	10,0	17,5
3 հերոս	5,0	5,0
4 հերոս	12,5	0
5 և ավելի հերոս	72,5	5,0
Ընդամենը	100,0	100,0

Հերոսների տիպերն առավել մանրամասն դիտարկելով (*Աղյուսակ 12*) նկատում ենք, որ *ATV-Int-ը,* ինչպես և կարելի էր ակնկալել, ընդհանուր առմամբ ամենահաճախն անդրադառնում է ադրբեջանական հերոսներին՝ 107,5%, ինչը նշանակում է, որ միջին հաշվով բոլոր լուրերում հիշատակվում է ավելի քան 1 ադրբեջանական հերոս:

Նրանց շարքում առանձին խմբերից ամենամեծ կշիռն ունի *«Ադրբեջանի արտաքին քաղաքականության մարմինները և ներկայացուցիչները»*՝ 22,5%, որում ներառված են Ադրբեջանի արտգործնախարարության, խոսնակի, տարբեր երկրներում և միջազգային կառույցներում Ադրբեջանի դեսպանների հիշատակումները: Այս ցուցանիշը հուշում է, որ *ATV-Int-ը* ուսումնասիրված լուրերում ադրբեջանական հերոսներից առավելապես լուսաբանել է Ադրբեջանի արտաքին քաղաքականության գերատեսչության գործողությունները: Ընդ որում՝ նորությունների թեմաներում հերոսների համամասնության դիտարկումը (տե՛ս *Աղյուսակ 13*) ցույց է տալիս, որ *«Ադրբեջանի արտաքին քաղաքականության մարմինները և ներկայացուցիչներն»* ամենից շատ հիշատակվել են *«Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը»* ներկայացնող թեմաներում՝ 77,8%: Այս տվյալը մատնանշում է, որ նշված թեման Ադրբեջանի պետական արտաքին քաղաքականության առարկա է հանդիսանում:

Աղյուսակ 12

Երեք հիմնական հերոսները նորություններում
(3 պատասխանի՝ 300%–ի հնարավորությամբ)

Հերոսներ	քանակ	%
Ադրբեջանական հերոսներ	*43*	*107,5%*
1. Ադրբեջան	4	10,0%
2. Իլհամ Ալիև	4	10,0%
3. Ադրբեջանի արտաքին քաղաքականության մարմիններ և դրանց ներկայացուցիչներ	9	22,5%
4. Ադրբեջանի ՊՆ, զինվորական դատախազություն	3	7,5%
5. Ադրբեջանի այլ պետական մարմինների ներկայացուցիչներ	5	12,5%
6. Խոջալուի բնակիչներ	5	12,5%
7. Ադրբեջանի մտավորականներ, հերոսներ, սփյուռք, կրոն. գործիչներ, տեղական ՀԿ-ներ	7	17,5%
8. Ադրբեջանի սովորական քաղաքացիներ	6	15,0%
Հայկական հերոսներ	*35*	*87,5%*
9. Հայաստան, հայկական կողմ (ներառյալ նախագահ) և ԼՂՀ	16	40,0%
10. ՀՀ ՊՆ, զինվորական մարմիններ, ներկայացուցիչներ	3	7,5%
11. Հայաստանի ընդդիմադիր գործիչներ	3	7,5%
12. Այլ հայկական սուբյեկտներ (հայ մտավորականներ, սփյուռք, Հայաստանի հարուստներ)	3	7,5%
13. Հայ ժողովուրդ, հայեր, Հայաստանի սովորական քաղաքացիներ	6	15,0%
14. Խոջալուի ողբերգության մեղավորներ*	4	10,0%
*ՌԴ հերոսներ**	*7*	*17,5%*
15. ՌԴ, արտաքին քաղաքականության մարմիններ և դրանց ներկայացուցիչներ	3	7,5%
16. Խոջալուի ողբերգության մեղավորներ*	4	10,0%
ԱՄՆ հերոսներ	*9*	*22,5%*
17. Պաշտոնական ԱՄՆ և պետպաշտոնյաներ	5	12,5%
18. ԱՄՆ Կոնգրես և կոնգրեսականներ	4	10,0%
19. ԵԱՀԿ, ԵԱՀԿ Մինսկի խումբ և համանախագահներ	*8*	*20,0%*
20. Պաշտոնական Թուրքիա և պետպաշտոնյաներ	*6*	*15,0%*
21. Պաշտոնական Իրան և պետպաշտոնյաներ	*6*	*15,0%*
22. ԵՄ, ԵԽ և ներկայացուցիչներ	*3*	*7,5%*
23. Այլ միջազգային կառույցներ, օտարերկրյա պաշտոնյաներ, քաղաքացիներ	*3*	*7,5%*

* Որպես «Խոջալուի ողբերգության մեղավորներ» ներկայացվում են «հայկական զինված ջոկատները» և «Ռուսաստանի/ռուսական 366-րդ գունդը», հետևաբար խմբակային հաշվարկում այն ներառված է և՛ «հայկական», և՛ «ՌԴ» հերոսների շարքում:

Ուսումնասիրված նորություններում հանդես գալու հաճախությամբ երկրորդ մեծ խումբը *հայկական հերոսներն* են՝ 87,5%:

Հատկանշական է, որ *ATV-Int-ը* հիմնականում հայկական հերոսներին ներկայացնում է *հավաքական ձևով*՝ որպես *«Հայաստան/հայկական կողմ»* կամ *«հայեր»*, և պակաս են անձնավորված հանդես եկող հերոսները: Այսպիսի *ընդհանրացումը* և *համահարթեցումը* քարոզչության մեջ կիրառվող մեխանիզմ է, ինչն ավելի է հեշտացնում խմբի նկատմամբ բացասական դիրքորոշումների արտահայտումը:

Առանձին հայկական հերոսների շարքում ամենամեծ կշիռն ունի *«Հայաստան, հայկական կողմ»* խումբը՝ 40% (ներառյալ որպես հիմնական հերոս 1-ական անգամ հիշատակված «ՀՀ նախագահը» և «Լեռնային Ղարաբաղը»): Հատկանշական է, որ ԼՂՀ-ն որպես առանձին սուբյեկտ հիշատակվել է մեկ անգամ: Սա ադրբեջանական քարոզչության կողմից ՀՀ և ԼՂՀ նույնացման միտումն է դրսևորում:

Նորությունների թեմաներում հերոսների համամասնությունը դիտարկելիս (տե՛ս *Աղյուսակ 13*) նկատում ենք, որ *«Հայաստանը»* ամենաբազմազան թեմատիկ մասնակցությունն ունեցող սուբյեկտն է, սակայն այն ամենից հաճախ հիշատակվել է *«Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը»* ներկայացնող թեմատիկ նորություններում՝ 25,0%: Հաջորդ երկուսը, որոնցում *«Հայաստանը»* հանդես է գալիս հավասարապես 18,8%-ով, *«ադրբեջանամետ տեղեկատվական-քաղաքական ակցիաներ»* և *«հայաստանյան սոցիալ-տնտեսական խնդիրներ»* թեմաներն են:

Հայկական հերոսների մեջ հաջորդ մեծ խումբն է *«Հայ ժողովուրդ, հայեր, ՀՀ քաղաքացիներ»*-ը՝ 15,0%: *«Հայերը»* ևս մեծ մասամբ՝ 50%-ով, հանդես են գալիս որպես *«Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը»* թեմայի հերոս, 33,3%-ով՝ *«Ադրբեջանական մշակույթի հայկական բանագողություն և յուրացում»* և 16,7%-ով՝ *«Հայաստանյան սոցիալ-տնտեսական խնդիրներ»* թեմաների հերոս:

«Խոջալուի ողբերգության մեղավորներ» խումբն իմաստային բովանդակությամբ ներառում է *«հայկական զինված ջոկատներ»* և *«Ռուսաստանի 366-րդ գունդը»* ենթախմբերը: *ATV-Int-ի* դիտարկված լուրերում նշված խմբի հիշատակումը կազմել է 10%[1], որն ամբողջությամբ հանդես է գալիս *«Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը»* թեմատիկայի շրջանակներում: Այսպիսով, ակնհայտ է *«Խոջալուի ողբերգության»* հարցում ոչ միայն Հայաստանի, այլև Ռուսաստանի նկատմամբ մեղադրական դիրքորոշումը: 2010թ. փետրվարի 26-ի ծանուցումը հայտնում է. «*...18 տարի սրանից առաջ* ***հայկական զինված ջոկատները Ռուսաստանի 366-րդ գնդի աջակցությամբ ցեղասպանություն իրականացրին*** *Խոջալուի խաղաղ բնակիչների նկատմամբ*»: Առանձին ուշադրության է արժանի այն, որ բացի նշված բացահայտ դեպքերից, լուրերից մեկում Ռուսաստանին հասցեագրված մեղադրանքը լատենտ բնույթ ունի: Ռուսաստանը դրանում հիշատակվում է որպես «հայտնի արտաքին ուժ». «*Հայաստանը երբեք չէր համարձակվի Լեռնային Ղարաբաղի շուրջ պատերազմի ընթացքում որևէ ինքնուրույն քայլ կատարել: Նրան օգնություն է ցուցաբերվել ոչ միայն Խոջալուի ցեղասպանության իրագործման հարցում, այլև բոլոր մարտական գործողություններն անց են կացվել հայտնի արտաքին ուժերի անմիջական միջամտությամբ ու օգնությամբ, և մինչ օրս էլ Հայաստանը գտնվում է այդ ուժի ստվերի տակ*»:

[1] «Խոջալուի ողբերգության մեղավորներ» խմբի առնչությամբ ցուցադրվել է 2 լայնածավալ ռեպորտաժ, որոնք 2-ն էլ կրկնվել են տարբեր օրերի՝ այդպիսով դիտարկված օրերին հանդես գալով 4 անգամ:

Աղյուսակ 13

Սուրբիկների ըստ թեմաների

Հերոսներ	1. Խոշոտրի և այլ դեղաքիմիական մեղվերի մեղուներ	2. Նմրբեջադուրեստ տնեկիտուսի. քաղամոմ ակցվածոն	3. ԼՆ նուիտուտ., նիմֆոսիոմ	4. ԼՆ-ն Նմր. դաս, աջոպիցիդուն տատաջք. ատրոնոշոպիդ.	5. Հայ-թոմրքուիդ նոմոքիմ-փոմսրդ ն Նմրբեջոն	6. Հայտտոդի սոցնայ-տնդտեոսիդ նեդվրնեդ	7. Հայերի նոսրնց ատրբեջադիդ մշիսիդի յուրացուդ	8. Հայոց ցեղասպանություն մեր ժամանակներում նոսդնմոդ
Ընդամենը	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%	100,0%
Այլ (9 և 10)	50,0%	25,0%	0,0%	11,1%	0,0%	0,0%	0,0%	0,0%
1. Աղրբեջան	25,0%	0%	0%	25,0%	0%	0%	0%	0%
2. Իրիսամ Ալիև	25,0%	0%	0%	50,0%	0%	0%	0%	0%
3. Աղրբեջանի արտաքին քաղ. գործերի նախարար.	77,8%	0%	0%	11,1%	0%	0%	0%	0%
4. Աղրբեջանի ՊՆ, զինվորական դասակազ.	66,7%	33,3%	0%	0%	0%	0%	0%	0%
5. Աղրբեջանի այլ պետական մարմինների ներկայացուցիչներ	60,0%	20,0%	0%	0%	0%	0%	0%	0%
6. Խոշորի բանիչներ	100,0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%
7. Աղրբեջանի սոսարդարանները, հերոսներ, սիրուդ, կրան. գրոնչներ, սեռական ՀԴ-ներ	42,9%	42,9%	0%	0%	0%	0%	14,3%	0%
8. Աղրբեջանի տվորական քարոզիչներ	50,0%	16,7%	0%	0%	0%	0%	33,3%	0%
9. Հայաստան, հայկական կողմ (ներառյալ նախագահ) և ՀՀ	25,0%	18,8%	6,3%	12,5%	12,5%	18,8%	0%	0%
10. ՀՀ ՊՆ, ռազմական մարմիններ (ներառյալ զինվորականներ)	66,7%	33,3%	0%	0%	0%	0%	0%	0%
11. Հայաստանի ընդդիմադիր գործիչներ	0%	0%	0%	0%	0%	100,0%	0%	0%
12. Այլ հայկական սուբյեկտներ (հայ սոսարդարանները, սիրուդ, Հայաստանի հարուստներ)	33,3%	0%	0%	0%	0%	33,3%	33,3%	0%
13. Հայ ժողովուրդ, հայեր, Հայաստանի տվորական քարոզիչներ	50,0%	0%	0%	0%	0%	16,7%	33,3%	0%
14. Խոշորի ոդերգության մեղվերներ (ներառյալ Ռուսաստանի 366-րդ գունդը)	100,0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%

7. Տեսանկյուն

Տեսանկյունների բազմազանության ապահովումը յուրաքանչյուր մեդիայի գլխավոր գործառույթներից մեկն է համարվում: Հետևաբար, մոնիթորինգի ժամանակ դիտարկվել է նաև այս հերոսների մասին տեղեկատվության տեսանկյունների քանակը:

Ինչպես տեսնում ենք *Աղյուսակ 14*-ում, 95,7 %-ով գերակայում է ընդամենը 1 տեսանկյունով հերոսների մասին բնութագրումը, ինչը խոսում է խիստ միակողմանի տեղեկատվական քաղաքականության մասին:

Աղյուսակ 14

Հերոսների մասին տեղեկատվության տեսանկյունները

Տեսանկյունների քանակը	քանակ	%
1. տեսանկյուն	111	95,7%
2. տեսանկյուն	5	4,3%
Ընդամենը	116	100,0%

8. Տեղեկատվության հիմնավորում. հերոսներն իրրև աղբյուր

Տեղեկատվության հիմնավորման եղանակները քարոզչական-տեղեկատվական գործողությունների էական կողմերից են: Այս առումով լրատվական դաշտում կարևոր է, թե ովքեր են տեղեկատվության հիմնական աղբյուրի դերում, որ տիպի աղբյուրներն ինչ թեմաներում են հանդես գալիս, ինչպես նաև, թե որքանով և որ դեպքերում են քննարկված հերոսներն իրենք հանդես գալիս իբրև աղբյուր:

Նախորդ հարցի դիտարկումն արդեն ցույց տվեց, որ *ATV-Int-ի* տեղեկատվական քաղաքականությանը բնորոշ չէ բազմազան տեսանկյունների ներկայացումը: Այդ դեպքում դիտարկենք, թե ինչպես են բազմազան աղբյուրները ծառայեցվում միևնույն տեսանկյան հիմնավորմանը:

Աղյուսակ 15-ում տեսնում ենք, որ դիտարկված օրերին ադրբեջանական աղբյուրները 95,0% առկայություն ունեն, ընդ որում՝ ամենաբարձր մասնակցությամբ աչքի են ընկնում *«ադրբեջանական պաշտոնական աղբյուրները»՝* 42,5%, և հաղորդող *«լրատվամիջոցը»՝ ATV-Int՝* 40,0%: Վերջինս իբրև աղբյուր առանձնացվել է այն դեպքերում, երբ փաստեր կամ այլ աղբյուրների կարծիքներ հաղորդելուց բացի, այս կամ այն չափով հայտնել է նաև լրատվամիջոցի գնահատող վերաբերմունքը՝ կարծիքը:

Այնինչ, հայկական աղբյուրները նկատելիորեն ցածր ցուցանիշ ունեն. *«հայկական պաշտոնական աղբյուրները»* հանդես են գալիս լուրերի 7,5%-ում, ինչը *ATV-Int-ի* եթերում հայկական պաշտոնական տեսանկյունի ներկայաց-

ման նվազ աստիճանի մասին է խոսում: Նույնքան՝ 7,5%-ով էլ *«Հայաստանի ընդդիմադիր գործիչներ»* են աղբյուր հանդիսանում: Սակայն ավելի մանրամասն դիտարկումը (տե՛ս *Աղյուսակ 16*) ցույց է տալիս, որ նորության գլխավոր հերոսի դերում հայտնված բոլոր «հայ ընդդիմադիր գործիչները» 100%-ով հանդիսանում են նաև աղբյուր, այնինչ *«ՀՀ պաշտոնական հերոսները»* որպես հերոս հանդես գալու միայն 13,0%-ի դեպքում են տեսակետ հնչեցնում:

Սրան հակառակ, *«Ադրբեջանի պաշտոնական հերոսները»* 52,0% դեպքերում նաև աղբյուր են: Ընդ որում՝ *«Ադրբեջանի արտաքին քաղաքականության մարմինները և դրանց ներկայացուցիչները»* և *«Ադրբեջանի ՊՆ, զինվորական դատախազությունը»* ասելիքով են հանդես եկել 100%–ով՝ այնքան, որքան հիշատակվել են եթերում: Հետևաբար, դիտարկված լուրերում հիմնականում վերջիններս են հանդես եկել Ադրբեջանի պաշտոնական խոսափողի դերում:

Հակահայկական քարոզչության մեջ *«Ադրբեջանի պաշտոնական աղբյուրների»* և մյուս աղբյուրների ներգրավման որոշ նրբություններ նկատելի են դառնում յուրաքանչյուր աղբյուրի մեջ թեմաների համամասնությունը դիտարկելիս (տե՛ս *Աղյուսակ 17*): Այսպես, օրինակ, *«Ադրբեջանի պաշտոնական աղբյուրները» ATV-Int-ի* եթերում հանդես գալու 47.1%-ը նվիրել են *«Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը»* ներկայացնող տեղեկատվություն հաղորդելուն: Նշված թեմայում *«պաշտոնական Ադրբեջանի»* ակտիվությունը նկատել էինք նաև «լրատվական առիթ» բաժնում: Հետևաբար, ստացված տվյալների համաձայն՝ Ադրբեջանի պաշտոնական մարմիններն են հակահայկական թեմաների լուսաբանման համար իրադարձությունների հիմնական նախաձեռնողները և քարոզիչները:

Աղյուսակ 15

Տեղեկատվության հիմնական 3 աղբյուրները լուրերում

Աղբյուրներ	քանակ	%
Ադրբեջանական աղբյուրներ	*38*	*95,0%*
1. Ադրբեջանի պաշտոնական աղբյուրներ	17	42,5%
2. Ադր. ընդդիմադիր գործիչներ	0	,0%
3. Ադր. հոգևոր, կրոնական գործիչներ	2	5,0%
4. Ադր. սովորական քաղաքացիներ, մտավորականներ	3	7,5%
5. Լրատվամիջոցը	16	40,0%
Հայկական աղբյուրներ	*7*	*17,5%*
6. Հայ. պաշտոնական աղբյուրներ	3	7,5%
7. Հայ. ընդդիմադիր գործիչներ	3	7,5%
8. Հայ. հոգևոր, կրոնական գործիչներ	0	,0%
9. ՀՀ սովորական քաղաքացիներ, մտավորականներ	1	2,5%
Երրորդ կողմ	*18*	*45,0%*
10. Միջազգային կառույցներ	2	5,0%
11. Երրորդ երկրի պաշտոնական աղբյուր	13	32,5%
12. Խոջալուի հիշատակի միջոցառման մասնակիցներ	3	7,5%
13. Ոչ մի աղբյուր	*2*	*5,0%*

Աղյուսակ 16

Որքանով են երեք հիմնական հերոսները նորություններում հանդես գալիս նաև իբրև աղբյուր

Հերոսներ	Այո	Ոչ
Ադրբեջանի պաշտոնական հերոսներ	*52,0%*	*48,0%*
1. Ադրբեջան	0%	100,0%
2. Իլհամ Ալիև	25,0%	75,0%
3. Ադրբեջանի արտաքին քաղաքականության մարմիններ և դրանց ներկայացուցիչներ	100,0%	0%
4. Ադրբեջանի ՊՆ, զինվորական դատախազություն	100,0%	0%
5. Ադրբեջանի այլ պետական մարմինների ներկայացուցիչներ	0%	100,0%
6. Խոջալուի բնակիչներ	0%	100,0%
7. Ադրբեջանի մտավորականներ, հերոսներ, սփյուռք, կրոն. գործիչներ, տեղական ՀԿ-ներ	42,9%	57,1%
8. Ադրբեջանի սովորական քաղաքացիներ	50,0%	50,0%
Հայկական պաշտոնական հերոսներ	*13,0%*	*87,0%*
9. Հայաստան, հայկական կողմ (ներառյալ նախագահ) և ԼՂՀ	6,3%	93,7%
10. ՀՀ ՊՆ, զինվորական մարմիններ, ներկայացուցիչներ	66,7%	33,3%
11. Խոջալուի ողբերգության մեղավորներ*	0%	100,0%
12. Հայաստանի ընդդիմադիր գործիչներ	100,0%	0%
13. Այլ հայկական սուբյեկտներ (հայ մտավորականներ, սփյուռք, Հայաստանի հարուստներ)	33,3%	66,7%
14. Հայ ժողովուրդ, հայեր, Հայաստանի սովորական քաղաքացիներ	0%	100,0%
Երրորդ կողմ	*38,1%*	*61,9%*
15. ՌԴ, արտաքին քաղաքականության մարմիններ և դրանց ներկայացուցիչներ	33,3%	66,7%
16. Խոջալուի ողբերգության մեղավորներ*	0%	100,0%
17. Պաշտոնական ԱՄՆ և պետպաշտոնյաներ	40,0%	60,0%
18. ԱՄՆ Կոնգրես և կոնգրեսականներ	0%	100,0%
19. ԵԱՀԿ, ԵԱՀԿ Մինսկի խումբ և համանախագահներ	12,5%	87,5%
20. Պաշտոնական Թուրքիա և պետպաշտոնյաներ	66,7%	33,3%
21. Պաշտոնական Իրան և պետպաշտոնյաներ	83,3%	16,7%
22. ԵՄ, ԵԽ ևն երկայացուցիչներ	33,3%	66,7%
23. Այլ միջազգային կառույցներ, օտարերկրյա պաշտոնյաներ, քաղաքացիներ	66,7%	33,3%

* Որպես «Խոջալուի ողբերգության մեղավորներ» ներկայացվում են «հայկական զինված ջոկատները» և «Ռուսաստանի/ռուսական 366-րդ գունդը», հետևաբար՝ խմբակային հաշվարկում այն ներառված է և՛ «հայկական պաշտոնական աղբյուրների», և՛ «Երրորդ կողմի» հերոսների շարքում:

Առանձնակի ուշադրության է արժանի այն փաստը, որ ըստ *Աղյուսակ 17*-ի տվյալների, *«հայկական պաշտոնական աղբյուրները»* ևս ներգրավված են *«Խոջալուի և այլ դեպքերում հայերի մեղքը»* ներկայացնող թեմայում՝ 2/3-րդ դեպքերում: Խնդրի ավելի խոր դիտարկումից պարզ է դառնում, որ տվյալների

այսպիսի բաշխումը պայմանավորված է միևնույն ռեպորտաժի 2 տարբեր օրերի կրկնությամբ: Իրականում թեմայի շրջանակներում 1 անգամ է հղում արվում *«հայկական պաշտոնական աղբյուրներին»*: Հայկական աղբյուրների միջոցով «Խոջալուում հայերի մեղքի» հիմնավորման մեկ այլ փորձ է կիրառվում նաև հետագայում՝ 2010.04.02-ին, նույն թվականի հունվարի 10-ին Ադրբեջանի տարածքն անցած ընտանիքի մասին լայնածավալ ռեպորտաժում, որտեղ ընտանիքի հայրը քննադատում է Խոջալուում երեխաների սպանությունը. «*Անդրադառնալով 1992թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը Խոջալու քաղաքում հայերի կողմից իրականացված ցեղասպանությանը՝ Եղիշ Գևորգյանը նշում է. «Էդ, չգիտեմ, խիղճ պիտի մարդ ունենա, որ երեխայի վրա զենք քաշի: Ես տենց բան չեմ պատկերացնում...փոքր ա, ինչով ա մեղավոր»*:

Վերադառնալով հիմնական դիտարկված օրերին՝ նշենք, որ Ադրբեջանի *ATV-Int*-ը, հիմնավորելու համար *«ադրբեջանական մշակույթի հայկական բանագողության և յուրացման»* մասին ինֆոլոգեմը, այս անգամ հղում է կատարել հայ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանին. «*Հայտնի հայ երգահան Արամ Խաչատրյանը բացահայտ խոստովանել է, որ նա իր երգերի զգալի մասը գրել է կրկնօրինակելով հայտնի ադրբեջանցի երգահան Ուզեիր Հաջիբեկովի ստեղծագործությունների հիմնական թեմաները*»:

Այսպիսով, *հայկական աղբյուրների անստուգելի հայտարարությունների վրա հղումներ* կատարելով՝ *ATV-Int-ը* նորություններում փորձում է *լեգիտիմացնել* իր քարոզչական թեզերը:

Ինչպես կարելի է տեսնել *Աղյուսակ 17*-ում, դիտարկված շրջանում հայկական աղբյուրների շարքում հանդես են գալիս նաև «հայ ընդդիմադիր գործիչները», որոնց հնչեցրած կարծիքներն առնչվում են միայն «ՀՀ տնտեսական խնդիրներին» և իշխանության սոցիալ-տնտեսական քաղաքականության քննադատությանը: *«Հայաստանի տնտեսական թուլությունը, ի հակադրություն Ադրբեջանի տնտեսական աճող հզորության»* դրույթը ևս ադրբեջանական քարոզչության դասական դարձած թեմաներից է[1]: Այս քարոզչական թեզը հիմնավորելու նպատակով *ATV-Int-ը* ներկայացնում է Հայաստանի ներքին տեղեկատվական հոսքից *ընտրողաբար* վերցված՝ միայն բացասական կամ իրենց թեզը հիմնավորող տեղեկատվությունը, և որ պակաս կարևոր չէ, հայկական աղբյուրների խոսքերով: *«Թիրախի ինքնաքննադատական տեսակետների շահարկումը»* և *«ընտրովի ինֆորմացիայի մատուցման»* հնարքը քարոզչության մեջ հայտնի և *ATV-Int-ի* ամենակիրառվող ձևերից են: Հայկական լսարանի վրա այս մեթոդի հավանական ազդեցությունը պայմանավորված է տվյալ տեղեկատվության մասին հայկական մեդիաներից տեղեկացված չլինե-

[1] Ադրբեջանի հակահայկական տեղեկատվական համակարգը, «Նորավանք» ԳԿՀ, Ե., 2009:

լու հանգամանքով, ինչը *ATV-Int-ի* տեղեկատվությանը ՀՀ *«մութ կողմերի բացահայտման»* էֆեկտ է հաղորդում:

ATV-Int-ի մյուս օրերի թողարկումներում դիտարկվել են նաև ՀՀ-ում *դեմոգրաֆիական, միգրացիոն, մարդու իրավունքների, ընտրությունների ազատության, սոցիալական անարդարության, բանակին առնչվող* և այլ խնդիրների շուրջ լուրեր, որոնցում որպես աղբյուր հանդես են եկել ոչ միայն ՀՀ ընդդիմադիր, այլև պաշտոնատար անձինք, ՀՀ քաղաքացիները, փորձագետները, միջազգային զեկույցները և 2009-2010թթ. ընթացքում տարբեր պատճառներով Ադրբեջանի կողմում հայտնված հայ պատանդները: Ակնհայտ է, որ *ATV-Int-ը* ՀՀ-ի և ԼՂՀ-ի մասին բացասական տեղեկատվության համակարգված հավաքագրում է իրականացնում ցանկացած աղբյուրից և այն մատուցում *«շեշտադրման շեղումներով»* և **«***կես ճշմարտությունների»* ներկայացմամբ:

Միջազգային կամ օտարերկրյա կառույցների զեկույցներից «կես ճշմարտությամբ» տեղեկատվություն տրամադրելու մի օրինակ է 2010.12.20-ի այն լուրը, որտեղ «*Economist Intelligence Unit*»-ի կողմից աշխարհի 167 երկրների թվում ժողովրդավարության ինդեքսով Հայաստանի գրաված 109-րդ տեղի մասին է ներկայացվում: Ինչպես ցույց տվեց մեր դիտարկումը, այս տեղեկատվությունը որոշակի «խմբագրությամբ» վերցվել էր հայկական ցանցային ռեսուրսներից՝ *ATV-Int-ի* համար ոչ ցանկալի տվյալները դեն նետելով: Այսպես, օրինակ, «*Նախորդ զեկույցի համեմատ՝ Հայաստանն իր դիրքերը բարելավել է 4 կետով: Կոնկրետ ցուցանիշների առումով, սակայն, Հայաստանում որևէ բարելավում 2008-ի համեմատ բրիտանացի մասնագետները չեն արձանագրել*» հատվածը ներկայացվել է առանց բարելավման մասին առաջին նախադասության. «*Կոնկրետ ցուցանիշների առումով Հայաստանում որևէ բարելավում 2008-ի համեմատ բրիտանացի մասնագետները չեն արձանագրել*»: Բացի այդ, *ATV-Int-ը* լռության է մատնել, թե նույն զեկույցում որ տեղում է հայտնվել Ադրբեջանը: Այն իր 135-րդ տեղով դասվել էր ոչ թե «հիբրիդային ռեժիմների», ինչպիսիք են համարվել Հայաստանը, Վրաստանը, Թուրքիան և Ռուսաստանը, այլ կառավարման «ավտորիտար ռեժիմ» ունեցող պետությունների շարքում:

Այսպիսով, աղբյուրների դիտարկումը վերջնականորեն բացահայտում է, որ *ATV-Int-ի* եթերում չնչին չափով են ներկայացված հայկական աղբյուրները, և նույնիսկ դրանք մեծ մասամբ «ինքնաքննադատական» կամ «ինքնախոստովանման» բովանդակություն ունեն ու ծառայեցվում են *հակահայկան քարոզչության հիմնավորմանը և լեգիտիմացմանը*:

Աղյուսակ 17

Վերլուծված տարածքի կյուսեֆերության համայնքային դեպքերի հակիրճակիտ

Հիվանդներ	1. Խոցալուծ և այլ դեպքերում հայելի մեջը	2. Ընդլայնված գործիքներ տեղեկատվի. քաղաքային ամբուլատորիա	3. ԼՆ հակատարտությունների դասակարգում	4. ԼՆ-ն Ընդ. սաս, աջակցությունն տարածքային անբավարարությունը	5. Հայ-թուրքական հարաբերություններ Ընդլայնված	6. Հայաստանյան սոցիալ-տնտեսական խնդիրներ	7. Ընդ. սշահարի հայկական բաղադրության և յուրացում	8. Հայոց ցեղասպանության մեր հաղորդումը Խորհրդարան
1. Ազգերի պաշտոնական արձագանքներ	47.1%	29.4%	5.9%	11.8%	0%	0%	0%	0%
2. Ադր. հոգևոր. կրոնական գործիքներ	50.0%	0%	50.0%	0%	0%	0%	0%	0%
3. Ադր. տվերական քարոզչություններ, մոսակերպանները	0%	0%	0%	0%	0%	0%	100.0%	0%
4. ATV-Int	31.3%	18.8%	18.8%	6.3%	6.3%	0%	12.5%	6.3%
5. Հայ. տեղեկատվական գործիքներ	66.7%	0%	0%	0%	33.3%	0%	0%	0%
6. Հայ. ընդհանրապես գործիքներ	0%	0%	0%	0%	0%	100.0%	0%	0%
7. ՀՀ տարածքում գործող, մոսակերպանները	0%	0%	0%	0%	0%	0%	100.0%	0%
8. Միջազգային կառույցներ	50.0%	0%	50.0%	0%	0%	0%	0%	0%
9. Երևանի Եկեղի պաշտպանական արքայազն	0%	0%	15.4%	30.8%	30.8%	0%	0%	15.4%
10. Խոջալուի հիշատակի միջոցառման մասնակիցներ	100.0%	0%	0%	0%	0%	0%	0%	0%

9. Հայկական հերոսների բնութագրումը

Այս մասում կներկայացնենք, թե *ATV-Int* -ի եթերի քանակական մոնիթորինգի ենթարկված օրերին ինչ որակական բնորոշումներ՝ պիտակներ և մեղադրանքներ են վերագրվել հայկական հերոսներին:

Ամենահաճախ կիրառվող պիտակները վերաբերում են «Հայաստան, հայկական կողմ», «Հայաստանի զինված ուժեր» և «հայեր, հայ ժողովուրդ» ընդհանրացված հերոսներին: Դրանք ներկայացված են *Աղյուսակ 18*-ում:

Աղյուսակ 18

Հայկական սուբյեկտներին վերագրվող պիտակներ

Հայաստան, հայկական կողմ	*«մարդասպաններ»*
	«զավթողական», «զավթիչ», «օկուպանտ»
Հայաստանի զինված ուժեր, զինված հայեր	*«Խոջալուի ողբերգության մեղավորներ», «Ադրբեջանի Խոջալու քաղաքի բնակչության դեմ իրականացված ցեղասպանության մասնակիցներ»*
	«զավթիչներ», «օկուպանտ»
	«անջատողականներ»
Հայեր, հայ ժողովուրդ	*«ազգամոլներ»*
	«հայերի հերյուրանք»
	«հայկական վայրագություններ»
	«հայերը ցուցաբերեցին ֆաշիստներին վայել դաժանություն»
	«չարագործներ»
	«Հարավային Կովկասում առաջացած չարորակ ուռուցք, որից անհապաղ պետք է ազատվել»

Բացի հստակ և հաճախակի կրկնվող պիտակներից, հայկական սուբյեկտների բնորոշումները դրսևորվում են նաև նրանց վերագրվող մեղադրանքներում: Ընդ որում, մեղադրանքներում ակտիվորեն դրսևորվում է ինչպես *կրկնման,* այնպես էլ *թվարկման* տեխնիկան, երբ շարունակաբար նշվում է միևնույն մեղադրանքը և դրա շրջանակներում թվարկվում են ենթամեղադրանքները՝ մեղքի *բազմապատկման էֆեկտ* ստեղծելով: Մեղադրանքների տեքստային օրինակները ներկայացված են *Աղյուսակ 19-ում*:

Հայկական սուբյեկտներին վերագրվող պիտակները և մեղադրանքների տեքստերը պարզորոշ ներկայացնում են, որ *ATV-Int*–ի եթերում ադրբեջանական քարոզչության օբյեկտ են հանդիսանում ոչ միայն հայկական իշխանական ու ռազմական ինստիտուտները, այլև «հայերը»՝ որպես էթնիկ միավոր:

Աղյուսակ 19

Հայկական սուբյեկտներին վերագրվող մեղադրանքներ

Մեղադրանք 1. Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքների նկատմամբ պահանջներ և գրավում, հետևանքներ
«ԼՂ խնդիրն առաջացել է 1988թ. Ադրբեջանի նկատմամբ Հայաստանի տարածքային պահանջներով հանդես գալուց հետո, ներկայումս Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղ տարածաշրջանը, ինչպես նաև նրան հարակից 7 շրջանները գտնվում են Հայաստանի զինված ուժերի օկուպացման տակ»:
«Հայկական կողմն օկուպացրել է Ադրբեջանի 20%-ը»:
«Հայաստանի ու Ադրբեջանի միջև շարունակվող հակամարտության արդյունքում օկուպացվել է Ադր. տարածքի մոտ 1/5 մասը, որի հետևանքով յուրաքանչյուր 8 մարդուց մեկը դարձել է փախստական կամ բռնի տեղահանված»:
«Եթե զավթիչ Հայաստանը չազատի մեր տարածքները, ապա մեծ պատերազմն անխուսափելի է»:
«...Հայաստանի զինված ուժերի և զորամիավորումների կողմից գերի ու պատանդ վերցված Ադրբեջանի 4459 քաղաքացիների, պատերազմի հետևանքով առողջությունը կորցրած 44000 և սպանված 22000 մեր հայրենակիցների մասին»:
«...կոչ եմ անում սկզբունքային գնահատական տալ Ադրբեջանի դեմ հայ ազգամոլների կողմից սկսված օկուպացմանը»:
Մեղադրանք 2. Հակամարտության ընթացքում կատարած հանցանքներ, այդ թվում՝ նմանը չունեցող Խոջալուի ցեղասպանություն
«Այդ հակամարտության ընթացքում իրագործվել են այնպիսի միջազգային ծանր հանցագործություններ, ինչպիսիք են ռազմական հանցագործությունը, մարդկության դեմ հանցագործությունը և ցեղասպանությունը: Խոջալուի ողբերգության պետական պատասխանատվությունն ամբողջությամբ ընկնում է Հայաստանի վրա»:
«Հայկական կողմը մեղավոր է Խոջալուի ողբերգությունում»:
«Այդ գիշեր Խոջալուի խաղաղ բնակիչների նկատմամբ հայերի կողմից իրագործված գազանությունները չի կարելի համեմատել որևէ այլ ողբերգական դեպքի հետ: Խոջալուի ցեղասպանությունը մարդկության պատմության մեջ խաղաղ բնակիչների հանդեպ իրագործված ամենասարսափելի հանցագործություններից մեկն է, այդ օրը հայերը ցուցաբերեցին ֆաշիստներին վայել դաժանություն»:
«90-ական թթ. պատերազմ էր գնում հետխորհրդային մի շարք պետություններում, որոնց ընթացքում իրագործվեցին մի շարք ռազմական հանցանքներ, սակայն Խոջալուի ցեղասպանությունը չունի նմանը»:
«Առկա են փաստաթղթեր, որոնք վկայում են ոչ միայն Խոջալուի բնակիչների, այլև ադրբեջանական մյուս շրջանների բնակիչների նկատմամբ հայերի իրագործած գազանությունների մասին»:
«... որը նվիրված է հայերի կողմից Խոջալուում իրականացված ցեղասպանությանը...»:
«Խախտելով միջազգային կոնվենցիայի հումանիտար իրավունքի նորմերը՝ հայերը անողոք վայրագությունների են ենթարկել ադրբեջանցի գերիներին, քերթել են նրանց գլխի մաշկը, կտրել քիթը»:
«Ադրբեջանական Խոջալու քաղաքի սպանված խաղաղ բնակիչների հիշատակը հարգելու նպատակով Թեմզա գետի ջրերն են նետվել կարմիր մեխակներ և երկինք են թողնվել 613 փուչիկներ՝ ճիշտ այնքան, որքան մարդ է սպանվել հայ զավթիչների կողմից 1992թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը Խոջալու քաղաքում»:
«Քաղաքի անմեղ բնակիչները հարձակման ենթարկվեցին գիշերվա խավարում, հայերը չխնայեցին ոչ կանանց, ոչ երեխաներին, ոչ էլ ծերերին: Ադրբեջանի կառավարությունը պետք է անի հնարավոր ամեն ինչ, որպեսզի համաշխարհային հանրությանը հասցնի հայերի կատարած գազանությունների վերաբերյալ փաստերը»:
«Նրանք մեղադրվում են Ադրբեջանի քրեական օրենսդրության 106, 107, 113, 115 և 116-րդ հոդվածներով»:

«Ադրբեջանական բնակչության զանգվածային կոտորածը տեղի է ունեցել քաղաքի գավթման ժամանակ, ավելին՝ գավթիչները հետապնդել ու սպանել են անգեն մարդկանց, որոնք փորձել են փախչել»:
«1992թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը հայկական զինված ջոկատները Ռուսաստանի 366-րդ գնդի աջակցությամբ իրագործեցին Խոջալուի ցեղասպանությունը, որի զոհերը դարձան 613 անմեղ բնակիչներ»:
«1992թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը Խոջալու քաղաքի բնակիչների նկատմամբ իրագործվել է իր դաժանությամբ նմանը չունեցող հաշվեհարդար: Այդ արյունալի դեպքերի ընթացքում, որը հայտնի է որպես Խոջալուի ցեղասպանություն, ոչնչացվել կամ գերի են վերցվել հազարավոր ադրբեջանցիներ, Խոջալու քաղաքը ջնջվել է երկրի երեսից»:
«1992թ. փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը հայկական զինված ջոկատները Ռուսաստանի 366-րդ գնդի աջակցությամբ, հարձակման անցան ադրբեջանական Խոջալու քաղաքի վրա: Նրանք շրջապատեցին քաղաքն ու կոտրեցին քաղաքի պաշտպանների դիմադրությունը: Գիշերվա խավարին փրկություն փնտրող մարդկային ամբոխը անտառի միջով, մինչև ծնկները ձյան մեջ թաղվելով շարժվեց դեպի Գարգառ գետը: Վաղ առավոտյան կրակ բացելով՝ Խոջալուի բնակիչներին դիմավորեցին զինված հայերը, որոնք հարմար դիրքեր էին զբաղեցրել բարձունքների վրա: Հայկական զինված զորամիավորումները Խոջալու քաղաքը գրավելուց հետո դաժան հաշվեհարդար տեսան խաղաղ բնակիչների նկատմամբ: Այդ ցեղասպանության արդյունքում սպանվեց 613 մարդ, այդ թվում՝ 63 երեխա, 106 կին և 70 ծերունի, ամբողջությամբ ոչնչացվեց 8 ընտանիք, 25 երեխա կորցրեց ծնողներից 2-ին էլ, իսկ 130-ը՝ ծնողներից 1-ին, վիրավորվեց 487 մարդ, որոնցից 76-ը երեխաներ էին, անհայտ կորավ 150 մարդ: Նույնիսկ այն, որ այս ցուցակում հրազենից սպանվածներից բացի ընդգրկվել են նաև ցրտի հետևանքով զոհվածները, սա մեծ թիվ է...: Հնարավոր չէ արդարացում գտնել անմեղ երեխաների և ծերերի սպանությանը: ... Խոջալուի մոտ 700 բնակիչներ չլքեցին քաղաքը, այլ նախընտրեցին թաքնվել իրենց տների նկուղներում: Սակայն նրանք նույնպես դառը ճակատագրի արժանացան»:
«Հանցագործությունն իրականացնելուց հետո հայ անջատողականներն ուղղաթիռների վրա կրակ բացելով փորձում էին խոչընդոտել լրագրողների այցը դեպքի վայր»:
«Հայաստանի զինված ջոկատներն իրականացրին ցեղասպանություն»:
«Ադրբեջանցիների նկատմամբ հայերի իրականացրած գազանությունների մասին իրողությունները հասցվում են համաշխարհային հանրությանը»:
«...կոչ եմ անում անտարբեր չմնալ մեր ժողովրդի ողբերգությանը և Խոջալուում իրականացված հանցագործությունը ճանաչել որպես ցեղասպանություն մարդկության դեմ»:
Մեղադրանք 3. Միջազգային հանրությունից ճշմարտության կոծկում
«Հայկական կողմը համաշխարհային հասարակայնությունից ոչ մի ձևով չի կարող թաքցնել օկուպացված տարածքներում Ադրբեջանի խաղաղ բնակիչների նկատմամբ իրագործված վայրագությունների մասին ողջ ճշմարտությունը»:
«Պատմական փաստեր, թե հայերի հերյուրանք» և «Ողբերգություն լուսանկարներով» գրքերն արդեն ներկայացվել ու բաժանվել են ընթացիկ տարվա փետրվարին Եվրախորհրդի Խորհրդարանական վեհաժողովի ամառային նիստի մասնակիցներին»:
«Օրերս հայերի կողմից ինտերնետային կայքում անամոթաբար խեղաթյուրվել է Խոջալուի ողբերգությունը»:
Մեղադրանք 4. Բանագողություն
«Ադրբեջանի Ղարաբաղ տարածաշրջանը հնուց ի վեր հայտնի է ոչ միայն հիասքանչ բնությամբ, երաժշտական հարուստ մշակույթով, արագավագ նժույգներով, այլ նաև հոյակապ գորգերով... Գործված գորգերը վաճառվում էին Թավրիզում և Ստամբուլում, իսկ հիմնական գնորդները լինում էին հայ վերավաճառողները, որոնք հաճախ ձեռք բերված գորգերին տալիս էին հայկական անուններ»:
«Այս երգը (Սարի գյելին) հայերը ձևափոխելով երգում են սարի աղջիկ, որն էլ ամբողջովին փոխում է երգի իմաստն ու բովանդակությունը»:
«Հայտնի հայ երգահան Արամ Խաչատրյանը բացահայտ խոստովանել է, որ նա իր երգերի զգալի մասը գրել է կրկնօրինակելով հայտնի ադրբեջանցի երգահան Ուզեիր Հաջիբեկովի ստեղծագործությունների հիմնական թեմաները»:

Եզրակացություններ

Վերոնշյալ տվյալները ցույց են տալիս ադրբեջանական *ATV-Int* հեռուստաալիքի քարոզչական քաղաքականության որոշ նրբություններ: Տարբեր փոփոխականների միջոցով լրատվության ուսումնասիրությունը հիմնավորում է, որ քարոզչությունը միակողմանի և անթաքույց հակահայկական է, որը նախաձեռնվել և իրականացվել է մեծ մասամբ Ադրբեջանի պաշտոնական դերակատարների կողմից: Եթերն աչքի է ընկել նաև որոշակի հակառուսականությամբ (1 դեպքում՝ նաև լատենտ): Մասնավորապես, խոսքը «Խոջալուի ողբերգություն» ինֆոլոգեմում Ռուսաստանի 366–րդ գնդի մասնակցության և առհասարակ Ղարաբաղյան պատերազմում Ռուսաստանի կողմից հայերին աջակցելու մասին է[1]: Հակաիրանական տրամադրություններ տարածող ռեպորտաժները ևս վերաբերում են Իրանի կողմից Հայաստանի աջակցությանը:

Ընդհանուր առմամբ, ադրբեջանական *ATV-Int-ի* կողմից քարոզչական քաղաքականության ուսումնասիրությունից բխում է, որ ՀՀ-ն և ԼՂՀ-ն պետք է ջանքեր գործադրեն քաղաքացիների տեղեկատվական անվտանգության պաշտպանության ուղղությամբ՝ ձևավորելով համընդհանուր տեղեկատվական տարածություն, որի առաջին քայլերը կլինեն.

1. ՀՀ հանրային հեռուստաընկերության կողմից մարզային հատուկ թղթակիցների ինստիտուտի ուժեղացումը և մարզերի շուրջ տեղեկատվության ինտենսիվացումը
2. ՀՀ և ԼՂՀ սոցիալական կյանքի շուրջ փոխադարձ տեղեկատվության ինտենսիվացումը[2],
3. հանրային հեռուստաընկերությունների կողմից ՀՀ և ԼՂՀ ներքին խնդիրների շուրջ հասարակության տարբեր խմբերի տեսակետների քննարկման բանավեճային հարթակների (հաղորդաշարի) ստեղծումը և դրանց խրախուսումը բոլոր մեդիաներում:

Փետրվար, 2011թ.

[1] Հակառուսականությունը հակահայկականին զուգակցելու մեխանիզմը Ադրբեջանը կիրառում է արևմտյան որոշ երկրներում, հատկապես Արևելյան Եվրոպայի հակառուսական տրամադրություններով հագեցած երկրներում: Այդպիսով նրանք պատրաստի հակառուսական հողում սերմանում են հակահայկականություն:

[2] 2010թ. հոկտեմբերին «Հայաստանի եվրոպական բարեկամներ» կազմակերպության հարցումների համաձայն՝ ՀՀ-ում ԼՂՀ սոցիալ-քաղաքական կյանքով բոլորովին չի հետաքրքրվում կամ խիստ նվազ է հետաքրքրվում հարցվողների 35%-ը, իսկ ԼՂՀ-ում ՀՀ սոցիալ-քաղաքական կյանքով՝ համապատասխանաբար 14%-ը: Փոխադարձ հետաքրքրվածության նման մակարդակը կարելի է բարձրացնել համակարգված տեղեկատվական գործողությունների միջոցով: Տե՛ս http://www.eufoa.org/en/publications/research

ХАРАКТЕРИСТИКИ АРМЯНОЯЗЫЧНЫХ АЗЕРБАЙДЖАНСКИХ ТЕЛЕПЕРЕДАЧ

Анна Жамакочян

Резюме

В статье проанализированы данные мониторинга некоторых выпусков армяноязычных новостей на азербайджанском пропагандистском канале *ATV International*. Они свидетельствуют о том, что в находящейся в центре внимания телеканала тематике превалирует армяноненавистничество, распространяемое на все группы Армянства и во всех модусах: начиная с отдельных деятелей до общих понятий «армяне» и «Армения». Данные мониторинга показывают, что в исследуемый период основными акторами антиармянской пропаганды выступали официальные лица Азербайджана, особенно представители МИДа АР, дипломаты. При этом пропаганда исключительно тенденциозна и одностороння: по любому затрагиваемому вопросу приводится только азербайджанская точка зрения. Часто используются текстовые и визуальные механизмы пропаганды.